



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Երևան, 0025, Արովյան 52^ա • Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52^а •
52^а Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia(+374 10) 54-43-91/94,95,96/1 ՀՀ -37,
armphilology@ysu.am, www.ysu.am

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 2
ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2022 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 9 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփում:
2. Հեռակա դասերի ընթացքը ֆակուլտետում:
3. Ժամանակակից հայոց լեզվի ամբիոնի տարեկան հաշվետվությունը:
4. Տեղեկատվություն հոկտեմբեր ամսին ժամանակակից հայոց լեզվի և ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնների և ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի կողմից կազմակերպված գիտական նստաշրջանների մասին:
5. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի ղեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 27-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ:

Օրակարգի 1-ի հարցի առթիվ հայ բանասիրության ֆակուլտետի ղեկանի տեղակալ դոց. Ա. Մարգարյանը տեղեկացրեց, որ ընթացիկ քննությունները անցել են նախապես կազմված ժամանակացույցին համապատասխան, խնդիրներ չեն եղել: Նա նշեց նաև, որ ԵՊՀ ըլեկտրոնային հարթակի վերազինման աշխատանքներով պայմանավորված ոչ բոլոր ուսանողներն են կարողացել ստանալ իրենց գնահատականները, սակայն դա ժամանակավոր բնույթ է կրում: Ամբիոնների վարիչները ևս իրենց խոսքում

փաստեցին, որ ընթացիկ քննաշրջանի ընթացքում խնդիրներ չեն եղել: Այնուհետև ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը ներկաների ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ արդեն երկրորդ տարին է ընթացիկ քննությունները մեկնարկում են շաբաթվա կեսից/այս տարի սկսվել են հինգշաբթի օրվանից և ավարտվել հաջորդ շաբաթվա չորեքշաբթի օրը/, ինչը լրացուցիչ խթան է հանդիսանում ուսանողների բացակայությունների համար, քանի որ մեկնարկող և հաջորդող կիսատ շաբաթները ուսանողների մի մասը վերածում է կարճատև արձակուրդի: Նա առաջարկեց գիտխորհրդի անունից դիմել ռեկտորատին հնարավորության դեպքում նախկին տարիների նման ամբողջական շաբաթ հատկացնելու ընթացիկ քննություններին/երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ/:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ ֆակուլտետի դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը տեղեկացրեց, որ հեռակա ուսուցման առաջին կիսամյակը մեկնարկել է բնականոն, բոլոր դասերը կայանում են նախատեսված ժամակացույցով: Դոց. Ա. Սարգսյանը տեղեկացրեց նաև, որ ԵՊՀ էլեկտրոնային համապատասխան հարթակում բոլոր դասընթացների օրացուցային պլանները չէ, որ տեղադրված են, և խնդրեց ամբիոնների վարիչներին այդ հարցում ուշադիր լինել և դասախոսներից պահանջել, որ սահմանված ժամկետներում բոլոր նյութերը տեղադրվեն և հասանելի լինեն ուսանողներին:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ ժամանակակից հայոց լեզվի ամբիոնի վարիչ պրոֆ. Յու. Ավետիսյանը ըստ ոլորտների ներկայացրեց ամբիոնի հաշվետվությունը՝ մասնավորապես նշելով.

Ամբիոնի կազմը կամ Աշխատակազմը

Ամբիոնի աշխատակազմը ունի քսանյոթ անդամ, որոնցից երկուսը՝ դոկտոր, քսաներեքը՝ գիտությունների թեկնածու. մեկ պրոֆեսոր, տասնութ դոցենտ, վեց ասիստենտ, երկու դասախոս. առկա ուսուցման հինգ ասպիրանտ, հեռակա ուսուցման մեկ ասպիրանտ, մեկ հայցորդ:

Ունենք հրավիրված վեց դասախոս՝ դոկտորներ, թեկնածուներ ևն:

Ամբիոնում աշխատում է երեք գործավար՝ մեկուկես հաստիքով:

Գիտական մաս

2021-2022 թթ. ամբիոնը հրատարակել է՝

• **յոթ մենագրություն**՝ <<Հայագիտության գուգահեռականներում>> (Յու. Ավետիսյան), <<Արդի հայերենի բառապաշարը. զարգացման միտումներ. հիմնախնդիրներ>> (Յու. Ավետիսյան, Լ. Թեյլան, Լ. Սարգսյան), <<Հայոց անվանարանը>> (Փ. Մեյթիխանյան), <<Հայոց լեզվի և խոսքի մշակույթի ձևավորման մեթոդիկա>> (Զ. Աղաջանյան), <<Քեսապի նիւթական մշակույթը>>, <<Օսմանեան բանակի զինուոր Ս. Հանիեանի

վկայությունը», «Սուրիահայ դպրոցի պատմություն» (Ա և Բ հատորներ) (**Հակոբ Չոլաքյան**):

- **Երկու բառարան՝** «Հոմանիշների առձեռն բառարան» (2020 թ.), «Դարձվածքների, համանունների, հապավումների առձեռն բառարան» (2020 թ.) (հեղինակներ՝ **Յու. Ավետիսյան, Հ. Չաքարյան**):

- **մեկ դասագիրք՝** «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» (բուհերի բնագիտամաթեմատիկական ֆակուլտետների համար): **Համահեղինակներ՝ Յու. Ավետիսյան, Գ. Ներսեսյան, Ծ. Գևորգյան, Ս. Գաբրիելյան**:

- **ուսումնասովանդակ մեկ ձեռնարկ՝** «Թարգմանության տեսության հիմունքներ» (Արևիկ Բամալյան): Այս ձեռնարկը նախատեսված է հայ բանասիրության ֆակուլտետի «Թարգմանության տեսության հիմունքներ» առարկայի համար:

- Տպագրվել է **մեկ մենագրություն՝** «Երվանդ Օտյանի երգիծանքի խոսքարվեստը» (Լիանա Սարգսյան):

Ամբիոնի դասախոսների տպագրած հոդվածների քանակը անցնում է **երկու տասնյակից**: Վերջին շրջանում մոտ 6-7 հոդված:

Ամբիոնի աշխատակիցները 2021 թթ. սկսել են և շարունակում են ՀՀ գիտության պետական կոմիտեի թեմատիկ-պայմանագրային աշխատանքը («Արդի արևելահայերենի քերականական բառարան»): Հեղինակային խումբը հրատարակել է **թեմային վերաբերող երեք հոդված**: Կազմակերպել է հանրապետական գիտաժողով, որը անցկացվել է հոկտ. 22-23-ը Ծաղկաձորում՝ Գրողների միության տանը: Մասնակցել են մոտ քառասուն հոգի՝ հանրապետության տարբեր բուհերի և կրթական-ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ և ուսանողներ. մասնակիցներից տասնհինգը կարդացել են զեկուցումներ: Գիտաժողովը նվիրված էր մեկ կոնկրետ հարցի՝ արդի արևելահայերենի ձևաբանության հիմնախնդիրներին: Զեկուցումները հոդվածների տեսքով կհրատարակվեն 2023 թ. առաջին եռամսյակում:

Կրթական մաս

Այս ուսումնական տարում առկա ուսուցմամբ ասպիրանտուրա է ընդունվել մեկ ուսանող՝ **Գայանե Դալլաքյանը** (ատենախոսության թեմա է հաստատվել «Բարդ նախադասության դասակարգման հիմնախնդիրը հայ քերականագիտության մեջ»), ձևակերպվել է մեկ հայցորդ՝ **Աննա Ալավերդյանը** (ատենախոսության թեմա է հաստատվել «Շահան Շահնուրի գեղարվեստական արձակի լեզուն»):

Ամբիոնի մագիստրատուրայի առաջին կուրսում սովորում են 10 մագիստրանտներ: Մագիստրատուրայում ներառել ենք մի քանի նոր դասընթացներ՝ «Լեզվամշակույթի և թարգմանության հիմնախնդիրներ», «Տեքստի խմբագրում և հրատարակչական գործ»,

«Ոճաչափության հիմունքներ», «Լեզու, մեղիամտածողություն, հասարակություն», «Գրական թարգմանություն»:

Ամբիոնի վերջին նիստում որոշվել է ամբիոնի մագիստրոսական ծրագրի (կոչվում է «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ») երկամյա ուսուցումը դարձնել մեկուկեսամյա: Կատարվել են ծրագրային համապատասխան փոփոխություններ, որոնք նկարագրիչներով և մասնագիրներով կներկայացվեն ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը՝ համապատասխան ընթացք ստանալու համար:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ հոկտեմբեր ամսին ժամանակակից հայոց լեզվի և ակադ. Հր.Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնների և ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի կողմից կազմակերպվել են գիտական նստաշրջաններ, որոնք անցել են բարձր մակարդակով: Ելույթ ունեցողները ևս նշեցին, որ երկու նստաշրջաններին էլ մասնակցել և զեկուցումներով հանդես են եկել ոլորտների առաջատար մասնագետները: Գիտաժողովներին մասնակցել են նաև ուսանողները, ինչը ուրախացնող հանգամանք է:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

ա/ **Լ Ս Ե Ց Ի Ն** - Հայ բանասիրության ֆակուլտետում գործող «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ» մագիստրոսական ծրագիրը 1,5 տարով իրականացնելու հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Վ. Գաբրիելյանը, Ալ. Մակարյանը, Յու. Ավետիսյանը, դոց. դոց. Ա. Սարգսյանը, Ա. Զրբաջյանը և ուրիշներ:

Նշվեց, որ «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ» մագիստրոսական ծրագիրը 1,5 տարում կազմակերպելու նախագիծը հնարավորություն է տալիս ավելի սեղմ ժամկետում իրականացնելու համապատասխան որակավորմամբ մագիստրոսների պատրաստումը: Նոր ծրագրի ողջ մասնագիրը կազմված է ԵՊՀ գործող կանոնակարգի չափորոշիչներին համապատասխան, մագիստրոսական ծրագրում ներառված դասընթացները և դրանց հատկացվող ժամաքանակները լիովին հնարավորություն են տալիս ապահովելու ծրագրի ակնկալվող վերջնարդյունքները:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – 1. Հայ բանասիրության ֆակուլտետում գործող «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ» ծրագրի իրականացումը կազմակերպել 1,5 տարում:

2. Դիմել ռեկտորատին՝ հաստատելու հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը:

բ/ Լ Ս Ե Ց Ի Ն - Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.Սարգիս Ռուդիկի Ավետյանին **Ժ. 02.02 - <<ընդհանուր և համեմատական լեզվաբանություն>>** մասնագիտությամբ ասպիրանտ և հայցորդ ղեկավարելու թույլտվություն տալու հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Յու. Ավետիսյանը, դոց. դոց. Ա. Սարգսյանը, Լ. Սարգսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ բ.գ.թ., դոցենտ Սարգիս Ռուդիկի Ավետյանը ներկայացրել է գիտական և մեթոդական աշխատությունների համապատասխան ցանկ և դիմում է **Ժ. 02.02 ընդհանուր և համեմատական լեզվաբանություն մասնագիտացմամբ** հայցորդ և ասպիրանտ ղեկավարելու իրավունք ստանալու համար:

Դոց. Ս. Ավետյանը գիտական պարբերականներում հրատարակել է 38 գիտական հոդված: Դոց Ս. Ավետյանը պատրաստական մասնագետ է և կարող է ղեկավարել ասպիրանտների և հայցորդների թեկնածուական ատենախոսությունները:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն –Դիմել ռեկտորատին և ԲՈԿ-ին՝ դոց. Ս. Ավետյանին տալու **Ժ. 02.02 - <<ընդհանուր և համեմատական լեզվաբանություն>>** մասնագիտությամբ ասպիրանտ և հայցորդ ղեկավարելու իրավունք:

գ/ Լ Ս Ե Ց Ի Ն - Հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի հայցորդ Հասմիկ Ռազմիկի Ստեփանյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ժ. Քալանթարյանը, դոց. դոց. Ա. Ջրբաշյանը, Վ. Եղիազարյանը և ուրիշներ:

Առաջարկվեց հաստատել թեկնածուական ատենախոսության թեմա՝ «Գուրգեն Խանջյանի արձակի պոետիկան» վերնագրով՝ գիտական ղեկավար առաջադրելով բ. գ. թ., դոցենտ Սեյրան Զավենի Գրիգորյանին:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – 1. Հաստատել հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի հայցորդ Հասմիկ Ռազմիկի Ստեփանյանի թեկնածուական ատենախոսության թեմա՝ «Գուրգեն Խանջյանի արձակի պոետիկան» վերնագրով՝ **Ժ.01.02-** <<Նորագույն շրջանի հայ գրականություն>> մասնագիտությամբ:

2. Գիտական ղեկավար հաստատել բ. գ. թ., դոցենտ Սեյրան Զավենի Գրիգորյանին:

դ/ Լ Ս Ե Ց Ի Ն - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. **Նվարդ Խաչատուրի Վարդանյանի** դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ժ. Քալանթարյանը, դոց. դոց. Ա. Ջրբաշյանը, Վ. Եղիազարյանը և ուրիշներ:

Առաջարկվեց հաստատել դոկտորական ատենախոսության թեմա՝ «**Հայոց հարսանեկան երգային բնագրերի բանագիտական քննություն**»՝ Ժ. 01.05 - «Բանահյուսություն» մասնագիտությամբ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության դոցենտ, ք. գ. թ. **Նվարդ Խաչատուրի Վարդանյանի** դոկտորական ատենախոսության թեմա հաստատել «**Հայոց հարսանեկան երգային բնագրերի բանագիտական քննություն**»՝ Ժ. 01.05 - «Բանահյուսություն» մասնագիտությամբ:

ե/ **Լ Ս Ե Ց Ի Ն** - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ **Սամվել Վարդանի Եղիազարյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ժ. Քալանթարյանը, դոց. դոց. Ա. Ջրբաշյանը, Վ. Եղիազարյանը և ուրիշներ:

Առաջարկվեց հաստատել թեկնածուական ատենախոսության թեմա՝ «**Իրական դեպքերի և դեմքերի գեղարվեստականացման սկզբունքները Շիրվանզադեի հուշագրության մեջ**»՝ Ժ. 01.01 - «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ՝ գիտական ղեկավար առաջադրելով ք. գ. դ., պրոֆ. Ալբերտ Արշավիրի Մակարյանին:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – 1. Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ **Սամվել Վարդանի Եղիազարյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «**Իրական դեպքերի և դեմքերի գեղարվեստականացման սկզբունքները Շիրվանզադեի հուշագրության մեջ**»՝ Ժ. 01.01 - «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ:

2. Գիտական ղեկավար հաստատել ք. գ. դ., պրոֆ. Ալբերտ Արշավիրի Մակարյանին:

զ/ **Լ Ս Ե Ց Ի Ն** - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հեռակա ասպիրանտ **Հասմիկ Ջիվանի Հակոբյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ժ. Քալանթարյանը, դոց. դոց. Ա. Ջրբաշյանը, Վ. Եղիազարյանը և ուրիշներ:

Առաջարկվեց հաստատել թեկնածուական ատենախոսության թեմա՝ «**Միջտեքստայնությունը 2000-ական թթ. հայ գրականության մեջ**»՝ Ժ. 01.04 - «Գրականության տեսություն» մասնագիտությամբ՝ գիտական ղեկավար առաջադրելով ք. գ. թ., դոցենտ Աշխեն Էդուարդի Ջրբաշյանին:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – 1. Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հեռակա ասպիրանտ **Հասմիկ Ջիվանի Հակոբյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«Միջուկայինությունը 2000-ական թթ. հայ գրականության մեջ»** Ժ. 01.04 - «Գրականության տեսություն» մասնագիտությամբ:

2. Գիտական ղեկավար հաստատել բ. գ. թ., դոցենտ Աշխեն Էդուարդի Ջրբաշյանին:

Է / Լ Ս Ե Ց Ի Ն - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ **Էլիշկա Սուրենի Մելիքբեկյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ժ. Քալանթարյանը, դոց. դոց. Ա. Ջրբաշյանը, Վ. Եղիազարյանը և ուրիշներ:

Առաջարկվեց հաստատել թեկնածուական ատենախոսության թեմա՝ **«Մայաթ-Նովայի քնարերգության հոգեբանական և փիլիսոփայական շերտերը»** Ժ. 01.01 - «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ՝ գիտական ղեկավար առաջադրելով բ. գ. դ., պրոֆ. **Սամվել Պարզևի Սուրադյանին**:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – 1. Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ **Էլիշկա Սուրենի Մելիքբեկյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«Մայաթ-Նովայի քնարերգության հոգեբանական և փիլիսոփայական շերտերը»** Ժ. 01.01 - «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ:

2. Գիտական ղեկավար հաստատել բ. գ. դ., պրոֆ. **Սամվել Պարզևի Սուրադյանին**:

Ր / Լ Ս Ե Ց Ի Ն - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ **Գևորգ Արշավիրի Գյուլումյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ժ. Քալանթարյանը, դոց. դոց. Ա. Ջրբաշյանը, Վ. Եղիազարյանը և ուրիշներ:

Առաջարկվեց հաստատել թեկնածուական ատենախոսության թեմա՝ **«Ազգային գոյապայքարի գեղարվեստական արտացոլումները 19-րդ դարի հայ պատմավիպասանության մեջ»** Ժ. 01.01 - «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ՝ գիտական ղեկավար առաջադրելով բ. գ. դ., պրոֆ. **Վազգեն Հմայակի Սաֆարյանին**:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – 1. Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ **Գևորգ Արշավիրի Գյուլումյանի**

թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Ազգային գոյապայքարի գեղարվեստական արտացոլումները 19-րդ դարի հայ պատմավիպասանության մեջ» ժ. 01.01 - «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ:

2. Գիտական ղեկավար հաստատել բ. գ. դ., պրոֆ. **Վազգեն Հմայակի Սաֆարյանին:**

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ
ԴՈՑ. Ա. ԳԱԼՍՏՅԱՆ**